ՆԱԽԱԳԻԾ

Երկրորդ ընթերցում

Խ-894[1]-09.03.2021,06.05.2021-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ
«ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Կուսակցությունների մասին» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-224-Ն սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասի 5-րդ կետում «առաջին երեք տասնյակի հաստատումը» բառերից հետո լրացնել «, իսկ դաշինքով ընտրություններին մասնակցելու դեպքում՝ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում թեկնածուների՝ առնվազն երեք տասնյակի հաստատումը»,

2) 5-րդ մասի 4-րդ կետում «համագումարի կողմից հաստատվելուց հետո» բառերից հետո լրացնել «կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի» բառերը,

3) 5-րդ մասի 5.1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«5.1) հաստատում է Ազգային ժողովի հերթական ընտրություններում կուսակցության և կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակները թեկնածուների այն մասով, որոնց հաստատումը սույն օրենքով և կուսակցության կանոնադրությամբ վերապահված չէ համագումարին, ինչպես նաև արտահերթ ընտրություններում՝ կուսակցության և կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակները»:

**Հոդված 2.** Օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել նոր՝ 6-րդ կետով.

«6) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանցից»:

**Հոդված 3. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքի 1-ին հոդվածն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից: